ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ–ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՑԵՎ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈ-ԶՈՈ-ԱՆԱՍՆԱ-ԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ ԱՄԱՌԱ-ՅԻՆ ՑԵՎ ԶՄԵՌԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԴՑԱՒՂՂՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

ՀԽՍՀ – ԳՍՌ

0 1 OCT 2010

0 5 SEP 2013

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏ–ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

636
Հ-25

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԵՎ

ՊԱՐՏԱԴԻՐ ԱԳՐՈ-ԶՈՈ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ ՅԵՎ ԶՄԵՌԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐՆ ԲԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2922
1000
28995

ԳՅՈՒՂՀՐԱՏ 1934 ԵՐԵՎԱՆ

21.3.38

Սրբագրիչ՝ Ե. Այվազյան
Հանձնվել է արտադրության 8 ապրիլի 1934 թ.
Տարածվել է ապագրելու 14 ապրիլի 1934 թ.,
Թույլատրված է գլավլիտից, Պատվեր № 284։ Տիրաժ 2000
ԴՅՈՒՂՔՈՄԻՏԻ ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50, ՀԵՌ. № 94

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

1934 թվի.....ի «.....»-ին

.....մենք սրա

ներքև ստորագրողներս, մի կողմից .....

..... շրջանի Հողբաժինը,

հանձին .....-ի, վորը

հետագայում կոչվելու է Հողբաժին և մյուս կողմից

..... շրջանի

.....գյուղի .....

անվան կոլտնտեսությունը,

գյուղխորհուրդը

հանձին .....-ի

վորը հետագայում կոչվելու է ոգտագործող, կնքեցինք սույն պայմանագիրը հետևյալում։

1. ..... Հողբաժինը

հատկացնում է .....

շրջանի ..... գյուղի .....

անվան կոլտնտեսությանը

գյուղխորհրդին

յերկարատև ժամանակով մինչև 1937 թ. վերջը ոգտագործելու պայմանով հետևյալ արոտներն ու խոտհարք ները։

ԱԳԵՆՔԻ ԽՈՍՏՈՎ

№ ե. գ.	Մոսկվայի գործակալի կամ ներկայացուցչի	№ տարանցիկ կամ ներկայացման	Տարանցումներ						Ներկայացման	Ստացման	Գրանցման
			1-ին կետ.	2-րդ կետ.	3-րդ կետ.	4-րդ կետ.	5-րդ կետ.	Ներկայացնողի			

Ներկայացնող՝

ՄԱՄԱՆԱԿԻՉՆԵՐԻ ՑԱՆԿ

№ №	Մեքենայի	№ № տարանցիկ կամ ներկայացման	Տարանցումներ						Ներկայացման	Գրանցման
			1-ին կետ.	2-րդ կետ.	3-րդ կետ.	4-րդ կետ.	5-րդ կետ.	Ներկայացնողի		

Ներկայացնող՝

2. Ոգտագործողը պարտավորվում է վերոհիշյալ արոտների և խոտհարքների վարձագինը, համաձայն գոյություն ունեցող կամ հետագայում սահմանվելիք դրույքների, մուծել Պետ. բանկի _____ ..... շրջանային բաժանմունքը, յուրաքանչյուր տարի վոչ ուշ քան հուլիսի 10-ը։

3. Ոգտագործողը պարտավորվում է հատկացված արոտների և խոտհարքների վրա կատարել Անդրհողժողկոմատի կողմից առաջարկված Ագրո-զոո-անասնաբուժական հետևյալ ձեռնարկումները, վորոնք կցվում են սույն պայմանագրին առանձին հավելվածով։

4. Ոգտագործողը պարտավորվում է կարգավորել հատկացված արոտների և խոտհարքների սահմաններում ընկած ճանապարհը, այն է՝ մաքրել քարերից, լցնել փոսերը, քարանոցներում (չինգիլներում) յեղած անցքերը կարգավորել, ճանապարհներով հոսող ջրերի առաջը կտրել, կամուրջները նորոգել։

5. Վերոհիշյալ 2, 3, 4 կետերում հիշված պարտավորությունները չկատարելու համար ոգտագործողը յենթարկվում է տուգանքի, այն է՝ 2-րդ կետը չկատարելու համար սահմանվում է տույժ չվճարված գումարի 0, 2%-ի չափով յուրաքանչյուր ժամկետանց որվա համար, իսկ կուլակներից՝ 1 կոպ. նույն ժամանակվա համար։ 3-րդ կետը չկատարելու համար վճարվում է տույժ արոտի վարձագնի կրկնակի չափով, բացի սահմանված վարձագինը. 4-րդ կետը չկատարելու համար՝ տույժ արոտի վարձագնի 75%-ի չափով։

6. Ոգտագործողն առանց հարգելի պատճառի իրեն հատկացված արոտամասից մի սեզոն չոգտվելու դեպքում զրկվում է այդ արոտներից։

7. Վերավարձակալությամբ (սուբարենդա) զբաղվող ոգտագործողները զրկվում են արոտներից և կանչվում են քրեական պատասխանատվության։

8. Ոգտագործողը պարտավորվում է պահպանել արոտների սահմաններում ընկած խոտհարքները և ժամանակին քաղել խոտը, հակառակ դեպքում կգանձվի չքաղված խոտհարքի վարձագինը կրկնակի չափով։

9. Ոգտագործողը պարտավորվում է արոտների ոգտագործության ժամանակ սույն պայմանագիրը և անհրաժեշտ տեղեկություններն արոտներում յեղած շնչերի, տնտեսությունների ու անասունների մասին թողնել արոտատեղի լիազորի մոտ, արոտներում, իսկ ճնացած ժամանակ կոլխոզի վարչության գրասենյակում։
գյուղխորհրդի

..... շրջհողբաժնի .....
(պաշտոնը)

.....
(ստորագրություն)

..... շրջ. .....

..... գյուղի .....
անվան կոլխոզի վարչության .....
գյուղխորհրդի (պաշտոնը)

.....
(ստորագրություն)

_____

ՊԱՐՏԱԴԻՐ

ԱԳՐՈ-ԶՈՈ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԻՆԻՄՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ ՅԵՎ ԶՄԵՌԱՅԻՆ ԱՐՈՏՆԵՐՆ ՈԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԿՑՎՈՒՄ Է Ж ԳԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆ 3 ԿԵՏԻ

Արոտատեղերի կանոնավոր (ռացիոնալ) ոգտագործման և նրանց արդյունավետությունը բարձրացնելու համար, համաձայն Անդրժողկոմխորհի 1934 թ. փետրվարի 7-ի վորոշման, առաջարկվում է բոլոր ոգտագործողներին կիրառել հետևյալ պարտադիր ձեռնարկումները։

1. Թույլատրելի չե արածեցնել ամառային արոտների մեկ հեկտարի վրա.

Առաջին կարգի արոտատեղում	մինչև	6—7	գլ.	վոչխար
Երկրորդ »	»	» 4—5	»	»
Երրորդ »	»	» 2—3	»	»

Զմեռային արոտների մեկ հեկտարի վրա.

Առաջին կարգի արոտատեղում	մինչև	3—4	գլ.	վոչխար
Երկրորդ »	»	» 2—3	»	»
Երրորդ »	»	» 1—1,5	»	»

Ձիերի և խոշոր յեղջյուրավոր անասունների համար անհրաժեշտ տարածությունը հաշվելու ժամանակ ընդունել հետևյալ հարաբերությունը.—

Մեկ ձին հավասար է 6—7 գլուխ վոչխարի. մեկ գլուխ խոշոր յեղջյուրավոր անասունը—5 գլուխ վոչխարի։

2. Ցուրաքանչյուր խորհտնտեսություն, կոլտնտեսություն և պյուղխորհուրդ պետք է ունենա արածեցվելիք բոլոր տարածությունների հատակագիծը, վորի վրա պիտի նշանակված լինի արոտատեղիների դրությունը (վիճակը)։

3. Չի թույլատրվում միևնույն տարածության վրա միատեղ արածեցնել տարբեր տեսակի անասուններ։ Այն դեպքում, յերբ խորհտնտեսության, կոլտնտեսության կամ անհատական սեկտորում կան տարբեր տեսակի անասուններ, պետք է սահմանել արոտներն արածեցնելու խիստ հերթականություն, այն է՝ սկզբում արածեցնել խոշոր յեղջյուրավոր անասուններն ու ձիերը։

Խոշոր անասուններն արածելուց հետո, բաց թողնել նրանց հետևվից արածելու համար մանր յեղջյուրավոր անասուններին։

Մատղաշներին արածեցնել հասակավոր անասուններից առանձին, տրամադրելով նրանց ամենալավ արոտները։

4. Արոտատեղիների արդյունավետությունը բարձրացնելու և նրանց արժեքը, վորպես անասնակերի, պահպանելու նպատակով, սահմանել արոտաշրջանառություն և արոտատեղերն արածեցնելու հերթականություն, բաժանելով արոտները համարժեք արոտամասերի և վանդակների։

5. Արոտատեղերը չփչացնելու նպատակով նրանց ոգտագործումը թույլատրվում է հողաշերտը չորանալուց և խոտերը բավականին (մինչև 10 սանտիմետր) բարձրանալուց հետո։

6 Անասուններին արոտատեղերը հանելիս, հատկապես լեռնային կտրտված խորթ ու բորթ ռելյեֆ ունեցող արոտատեղերում, արածեցնել ամբողջ ճակա-

տով, այլ վոչ իրար հետևից, վորից կոտրվում է հողի վերին շերտը և առաջանում է արոտների սանդուխաձևություն։

7. Սիստեմատիկաբար պայքարել մոլախոտերի դեմ, հնձելով կամ արմատախիլ անելով նրանց մինչև ծաղկելը, վորը կատարել ամբողջ ամռվա ընթացքում 3 անգամից վոչ պակաս։

8. Ոգտագործվելիք արոտատեղերի պետքական տարածությունն ավելացնելու նպատակով, հավաքել յեղած քարերը և դարսել փոքր բլրակների ձևով, վորպեսզի հետագայում ոգտագործել պատնեշների և այլ կարիքների համար։

Ցուրաքանչյուր տարի քարերից պիտի մաքրել քարերով ծածկված արոտատեղերի տարածության 10%-ից վոչ պակաս։

9. Արոտատեղերում աղբը հավասարավասար չափով բաժանված լինելու նպատակով փոխել անասունների գիշերվա կանգնելու տեղերը։

Հիմնական կանգնելու տեղերում կուտակված աղբը տեղափոխել այն տարածությունների վրա, վորտեղ բուսականությունը վատ է։

10. Արոտների ճահճանալու առաջն առնելու համար և ճահճուտներից առաջացած տարբեր հիվանդությունները կանխելու նպատակով, պետք է բաց անել ջրատար առվակներ՝ աղբյուրների և ճահճացած ջրերը հոսելու համար։

11. Մաքրել յեղած աղբյուրները և ջրի սակավության դեպքում նրանց մոտ պատրաստել ջրամբարներ՝ ջուրը հավաքելու համար։

ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԶՈՌ-ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

12. Արգելվում է ուղարկել արոտները, ինչպես և արոտավայրերում յեղած հոտերի մեջ անասուններ, առանց անասնաբուժական քննության կամ հողբաժինների կողմից տրված, անասունների առողջությունը հաստատող վորոշ փաստաթղթերի։

13. Մալինիզացիայի չենթարկված ու համապատասխան վկայական չունեցող ձիերը արոտավայր չուղարկել։

14. Անասունների հիվանդության դեպքում, հիվանդ անասուններին իսկույն և յեթ առանձնացնել հոտի մյուս անասուններից, անասնաբուժի կողմից քննության յենթարկելու համար։

15. Բոլոր հիվանդությունների, հատկապես անկումների դեպքում, անմիջապես հաղորդել քոչվորական անասնաբուժական կետին։

Մատակած անասունների կաշին չմաշկել և չթաղել առանց անասնաբուժի քննության և թույլտվության։

16. Անասնաբուժի առաջին խնդրանքի դեպքում բոլոր անասունները ներկայացնել քննելու և կիրառել նրա կողմից տրված խորհուրդներն ու ցուցումները

Արոտատեղիների ռացիոնալ ոգտագործման և նրա արդյունավետությունը բարձրացնելու (կետ 1—11) կանոնները խախտելու և չկատարելու համար դանցառները տուգանվում են արոտատեղի վարձագնի կրկնակի արժեքով, բացի հիմնական վարձագինը։

Հոտ-անասնաբուժական կանոնները (կետ 12—16) խախտելու դեպքում հանցավորները տուգանվում են վարձագնի յեռապատիկ չափով և յենթարկվում քրյական հետապնդման, վորպես դիտավորյալ ՀՈՏ-սաբարներ։



21.338

ՀՐԻ

Договор и зоминимум

636
Հ-25